20565

383
4-81

373
Ե-81
123

ՓՈԽ-ԹԵՄԱԿԱԼ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻՆ
ԵՐԵՒԱՆԻ

№

„ „ փետրվարի 1911 թ.

Երևան

.... ԴՊՐՈՑԻ

ՄԵԾԱՐԳՈՅ ԱՒԱԳ-ՈՒՍՈՒՑՉԻՆ

Դաստիարակութեան գործը որչափ բարդ և բազմազան պահանջներ ունի, դժբաղդաբար մեզանում, այնչափ էլ աննպաստ և արգելառիթ խոչնդոտներ ունի. բնական է, որ այսպիսի պայմաններում դաստիարակչական գործի յաջողութիւնն աւելի ու աւելի դժուարանում և շատ դէպքերում նոյն իսկ անհնարին է դառնում։ Այս ամենն աւելի աչքի են ընկնում որոշ գիւղական շրջաններում, որտեղ բազմատեսակ ընտանեկան, ընկերական և հասարակական պակասութիւնները դաստիարակչական գործը միանգամայն խեղդում և անհետևանք են թողնում. մի երևոյթ՝ որ միանգամայն հակառակն էր լինելու։

Նման երևոյթների առաջը հետզհետէ առնելու համար, քաղաքակիրթ ազգերի մէջ ընդունուած օգտակար միջոցներից մէկը մենք ևս գործադրեցինք, շրջանային ուսուցչական համագումարներ կազմելով։ Շնորհիւ սրանց, դաստիարակները իրանց տեսական, փորձնական առաւել ու պակասաւոր կողմերը շփման միջոցով մէկ մէկու հաղորդակից անելով՝ լաւն ու նպատակայարմարը ընդհանուրի սեփականութիւն կը դարձնեն։ Անցեալ 1910 թուի դեկտեմբերի 24—28-ը Ալէքսանդրապոլում և ներկայ 1911 թուի յունվարի 2—5-ը Երևանում տեղի ունեցած շրջանային ուսուցչական համագումարները դրա օգտակարութիւնը կրկին ու կրկին հաստատեցին և համագումարի վերջում ցանկութիւն յայտնեցին նման ժողովներ անել նաև Զատկական արձակուրդներին։

Ուրախութեամբ ընդառաջ գնալով այդ ցանկութեանը, սրանով առաջարկում ենք թեմի ուսուցչուհիներին և ուսուցիչներին օր առաջ ընկերական խորհրդակցութիւններ ունենալ և մինչև փետրուարի վերջին օրերը թեմական իշխանութեանը հաղորդել—ինչ տեսակ նիւթերի մասին կուզենային դասախօսութիւններ լսել, ինչ նիւթեր են իրենց համար աւելի հետաքրքիր և ինչ առարկաներ կուզենային համագումարի խորհրդակցութեան նիւթ դարձնել։ Միայն վաղօրօք արտայայտուելուց յետոյ հնարաւոր կը լինի դասախօսներ գտնել և նիւթերը կարգի բերել։

Զատկական արձակուրդներին ուսուցչական համագումարներ լինելու են Երևանում ապրիլի 12-ից—16-ը և Ալէքսանդրապոլում

2845-Ա.Հ.
4525-56
Պետական գրադարան Гос. Библиотека ՀՍՍՌ-Арм.ССР
20

ապրիլի 4, 5, 6 և 8-ին։ Աւելորդ չեմ համարում յայտնել նոյնպէս, որ օրակարգի մէջ լինելու են. 1) ուսուցչական գանձարանի խնդիր, 2) դպրոցական կանոնադրութեան մի քանի անհրաժեշտ խնդիրներ և 3) դասախօսութիւններ։

Առիթից օգտուելով պարտականութիւն եմ համարում խորին շնորհակալութիւնս յայտնել Թեմական Դպրանոցի տեսուչ պ. Ա. Չիլինգարեանին և Թեմական տեսուչներ՝ պպ. Տ. Ռաշմաճեանին և Թ. Խզմալեանին, որոնք յաջողութեամբ և իրենց յատուկ եռանդով և սիրով դէպի կրթական գործը ղեկավարեցին առաջին շրջանային համագումարները, պպ. Մ. Աբեղեանին, Մուսայելեանին, Տէրտէրեանին և Փուշմանեանին, որոնք սիրով յանձն առան պպ. Չիլինգարեանի, Ռաշմաճեանի և Խզմալեանի հետ միասին դասախօսութիւններ կարդալ և այն բոլոր ուսուցչուհիներին և ուսուցիչներին, որոնք իրենց պարտքն էին համարել ներկայ լինել և մասնակցել համագումարի պարապմունքներին։

Փոխ-Թեմակալ Երեւանի՝

Քարտուղար՝ [signature]

20565
2013.
<< Ազգային գրադարան
NL0054474